

Անդ զայ ի լիր ինձ Հայազգւոյն աննահանջ,  
 Անդ Հայաստան այլ մի՛ հսցէ խղճատանջ,  
 Եւ Հայուհիք, մարք վե՛հ որպէսց և թոռանց  
 Փառս յղեցցին նոր Կազանդին և յԱստուած:  
 Ուրեմն ի յայտ ասն ամանոր, եկ մաղթեմք  
 Հայոյն ուսումն, Հայոյն սէր և բարի դէպք —  
 Ուսումն միայն առնէ ըզՀայն մեծարու,  
 Թող 'պա ուսմամբ զպարտիս Հայոյն ճանաչեմք:  
 Մի մանկուոյն ձօնցեա զարծաթ կամ՝ զոսկի  
 Ըստ վաղաքնոյթ սովորութեան Հայ ազգի —  
 Տուր նոցա սիրտ, նախանձ բարի, սէր Մասեաց  
 Յորս ոսկէհուս արձանացի քո Տարի:  
 Անուս մանկտին պարզիկ քան զգառն և տխմար,  
 Բայց յի՞նչ զմայլի բուծն ի յէակս հրաշափառ —  
 — Թող զիտացէ նա ճառ կարդալ ի քո դամբան  
 Առաւել քան զմայիլ, վայել, լալ գոռալ:

Ա. Գ. ԴԱԻՐԻԺԵԾԻ.

### Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՎԵՂԱՐ.

Յակոր Քահանայն Տէր — Ըւետի-  
 քեանց՝ որ յամէն 1871 զրկեցաւ ի Վե-  
 զարակրութենէ, ըստ թախանձաղին և մե-  
 ղայական խնդրանացն՝ կրկին արժանացաւ  
 ընդունել զՎեղար և առաքեցաւ ի Սիւ-  
 բանակցութիւն ի Ս. Կարապետի Վան-  
 սըն Երնջակու:

ՉԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՀԱՆԳԻՍԲ.

Պաշտօնական գործով ի Ստաթէի վանուց գա-  
 լով սուրբ Էջմիածին, և մինչ ցաւարտիլ գործո-  
 ցը՝ շնորհ ունեցայ մի ամսաչափ մնալ Մայր Ա-  
 թոռոյս մէջ, բայց և այնպէս չեմ՝ կարող ան-  
 տարբեր և անուշաղիր անցնել առանց զրաւոր  
 արտայայտութեան մի քանի անկողմնասէր նը-  
 կատողութիւններ ի դիտութիւն սիրելի Ազգայնոց:

որոց մասին խնարհաբար կենդրեմ՝ ազգասէր  
 Ամազրոյդ էջերուն մէջ հիւրընկալութիւն:

Ճշմարտութիւնը թէ ի դրուս թագաւորաց և  
 թէ ի խրճիթս աղքատաց ամենայն ժամանակ  
 հզօր և յաղթական խոստովանած է, սպա ու-  
 րեմն ամենայն զգայուն և բանական մարդոյ վերայ  
 անհրաժեշտ հարկ կայ խօսել զայն ազատ վտա-  
 հութեամբ ամենայն տեղ առանց ակնածութեան.  
 Ինչո՞ք չէ, եթէ ոմանք զրազատ ամբաստանութիւ-  
 ներով և անհեթեթ խօսքերով յարձակուելով  
 կաշխատեն դիմակել նորա համատարած լուսոյ  
 ճառագայթները, այնպիսի անձինք իւրեանց հո-  
 դեոր և մտաւոր զգայարանքներն նախանձու և ա-  
 տելութեամբ թմրեցնելով անզգայացած են, և ոչ  
 երբէք կարող են նոքա ունենալ արդար և ու-  
 ղիղ հայեցողութիւն որեւիցէ ճշմարիտ առարկայի  
 վերայ:

Շարունակենք խօսքերս:

Հայաստանեայց սուրբ և ուղղափառ Կեղեղե-  
 ցին իւր զոյութեան և դրութեան մէջ ի սկզբա-  
 նէ ցայսօր ժամանակի անդրուելի պահպանուել է  
 զխաւորապէս վանականաց դրութեամբ և վանա-

կան պաշտպանողութեամբք, և ի ներկայս իբրև հաւատարիմ՝ աւանդապահ կվայելնք մեր նախնի սրբազան հարց հոգևոր երկանց և ճրգանց կենսաօրիժ պտուղը, որոնք ի շինութիւն և ի պայծառութիւն Քրիստոնէական սուրբ կրօնի տքնեցան ճգնեցան բարեկարգել զեկեղեցի զանազան հոգևոր երգերով և փրկարար խորհրդաւոր ծէսերով, որպիսի սրբազան խմբին մէջ առաւելապէս շահատակող և նահատակող հանդիսացան բարերարութեամբ և երախտաւորութեամբ մեծն Պարթև Իսահակ Հայրապետն և թարգմանիչն Մեսրոբը, որք երգեցին եղանակաւոր զերգս շարականաց, որոնք իւրեանց երանեալ ճակատներէն հոսեցին ազգասիրութեան քրտուներն՝ որպէս զի անկզու ազգերի լեզու պարգևեն, առաքելական ընթացքով ազդի և եկեղեցոյ յառաջագիմութեան համար շրջեցան աշխարհիս վերայ խարաղնազգեաց՝ բոկոտն եւն, բայց և այնպէս Մեծին Իսահակայ երախտիք փոխարինեցին, ձգել Աթոռէն բանտերու մէջ տանջել, Շմուէլի Քրդիչոյի և Սուրմակների ձեռք անցուցանել Աթոռն պարծանաց Հայկական ազդի՝ և ի վերջ հալածանօք և ցաւօք իջուցանել զնա ի գերեզման:

Եթէ դարձեալ խորամուխ լինենք պատմական անցքերի՝ կգտնենք որ արդարև շատ անգամ ազգըն Հայոց և եկեղեցին ննթարկուել են զանազան դառնաղէտ դիպուածոց կորսնցնելով իսպառ ազգային բարեկայելութիւնք և երբեմն ընտանի թշնամեաց ձեռքով եկեղեցական բարեկարգութիւն, այնու ամենայնիւ վանականութիւնը արեամբ չափ զիմադրկով այն ամեն թշնամական յարձակմունքների ցայտօր պահել և պահպանել է անարատութեան մէջ իւր սուրբ եկեղեցին, այժմ՝ ևս և ամենայն ժամանակ առանց արտաքինների յորդորման կամ օգնութեան իւր նուիրական պատականութիւնը քաջ ճանաչելով կշանայ և ջանալու է միշտ բառնալ իսպառ եկեղեցոյ մէջ թիրութիւնք և թերութիւնք եթէ ընդնամարին ներմուծած նորաձեւութեամբ ընդ օտար ազգեցութեամբ: Ի վաղուց գիտաւոր թերութիւն կնկատուի մեր եկեղեցական երգեցողութեան շարականաց մէջ, զոր առանց թաղուցանելոյ խոստովանելու ենք ճշմարտութեամբ, որ այժմ՝ ամենայն

տեղ Հայոց եկեղեցեաց մէջ միօրինակ ներդաշնակութեամբ չերգուել եկեղեցական երգեր և շարականներն իւրեանց բուն ձայներով, այլ այդ ամենը գրեթէ կախուած է երգիչների ձայնէն, կոկորդէ, հագաքէն, ուստի այսպիսեօք և պիտտարազ եղանակներով իբրև բարեկական խառնակութիւն մի ձևագած է, որից և հետզհետէ իսպառ խանդարումն, մինչդեռ մեր սուրբ նախնեաց երգոց և շարականաց ձայներ յօրինելուն բուն նպատակներն էր՝ Քրիստոսի հաւատացեալ որդիքն ժողովելով Աստուծոյ փառաց տաճարին մէջ ընդ ձեան հոգևոր երգոց և շարականաց պատշաճական եղանակաւոր ձայներով՝ նոցա հոգիք միտք և կամք հրաւիրել ի դարձ՝ ի մեղաց, հրաւիրել ի ճշմարիտ և կատարեալ հաւատ Քրիստոնէութեան, հրաւիրել դէպ երկինք, ահա՛ այս մասին իբրև հաւատարիմ՝ վկայութիւն ներսիսի նամբունացոյ մի քանի արդարացի խօսքերն թէ՛ չէք ինչ այնպիսի բան որ յեղաշրջիցէ զմիտս մեր յուրախութիւն կամ ի տրտմութիւն որպէս երգոցն ձայն եթէ ըստ պատշաճին լինիցի, Իսկ այժմու ժամանակիս երբ շնորհիւ Քարծրերոյն գահակալէ զԱթոռ Հայրապետութեան ազդիս Հայոց Տ. Տ. Գէորգ Ի. Ա. և հախառ Վաթուղիկոսն՝ որ և իբրև ճշմարիտ նախանձախնդիր Խնամակալ Արօնի, եկեղեցական կարգաց և կանոնաց՝ տեսնելով երկարժամանակեայ խանդարումն եկեղեցական բարեկարգութեանց երգոց և շարականաց ասեմ՝ վերաբերութեամբ, երբէք չվհատելով այն ամեն Հայրապետական ծանր զբաղմունքներէն՝ այլ ցաւ ի սիրտ փութացաւ օր յառաջ ազատել եկեղեցին այդ օրինակ խառնաշփոթ դրութենէն, հրաւիրել Վ. Պօլէն ձայնագրապիտութեան վարժապետ Պ. Նիկողայոսն Ս. Թաշճեան, ժողովել ասեմայն վիճակներէ հասակաւոր եկեղեցական պաշտօնեաներ, որոնք Մայր Աթոռոյս մէջ ուսանելով՝ կարճ միջոցով՝ այնպիսի մեծ յառաջադիմութիւն ցոյց տուին, որ ամենեցուն զարմանալի էր ի հարկէ այդ ամենը յատկապէս պարծանք են պարոն Թաշճեանի գեղեցիկ քանքարոյն և ազգասիրական եռանդոյն՝ որ անխոնջ ջանասիրութեամբ կցանկայ արդիւնաւոր երևալ իւր այդ նշանաւոր ասպարիզին մէջ: — Արդարև շատ սրտաշարժ էր և

միանգամայն անմտամարի սրբոյն Յակովբայ Մրծ-  
 րնայ հայրապետի և սրբոյն Ստեփաննոսի նա-  
 խավկայի տօնից օրերն, երբ մի կղերական բազ-  
 մութիւն ձեռքերին բռնած Հայկական ձայնադ-  
 րութեան լծերը՝ զհրեցիկ եղանակօք կերգէին  
 միաձայն ներդաշնակութեամբ հոգևոր շարական-  
 ներ ի մի բերան կիսաբարբաղ կտնգնած Ս. Իջ-  
 ման տիւրոյ առաջը, և որք սուրբ Տաճարին մէջ  
 ներկայ կգտնուէին՝ համարեա հոգևորապէս զմայ-  
 լած վերացական գողտիտաներ կզարթեցնէին իւ-  
 բեանց մտաց մէջ, լիաշուրթն գոհութիւններ ի  
 սրտէ մատուցանելով բարեաց պատճառին՝ որ է  
 մեծ բարեբարն Եկեղեցւոյ Ա.Ե.Տ. Հայրապետն մեր  
 Տ. Տ. Գէորգ Գ. Ա. յոպէս և շատ և շատ ուրա-  
 խական էր զիշխրային հանդէսն նոր տարւոյ առ-  
 լծիւ Ա.Ե.Տ.արանին մէջ, ուր Միաբանութիւնը հան-  
 զիսակից էին իւրեանց բարեխառ՝ Հայրապետի  
 հետ, նախապէս պարոն Թաշճեանը ներկայացոյց  
 նորին Ա.Ե.Տ.ախառութեան մի մեծ լծերի վերայ՝  
 գծած Հայկական ձայնադրեր մի նոր կրգի վերայ՝  
 որ իբրև ՌԻՍ ի նոր տարի յանուն Ա.Ե.Տ.ախառ  
 Վաթուղիկոսի շարահիւսեալ էր, հետևաբար ձայ-  
 նադրութիւն ուսանող խումբն զբաւորապէս կը-  
 գեցին զայն կրգը սրտատուչ եղանակօք Եւրոպա-  
 կան քառածիւղ ներդաշնակութեամբ, ուր և  
 հանդիսին պատշաճ ոտանաւոր և ճառ կարդացին  
 գպիր Մակարն Գրիգորեան և Սարկաւոյ Ջօհ-  
 րապն. սպա Ա.Ե.Տ.ախառ Վաթուղիկոսն խօսեցաւ  
 զէպի Միաբանութիւնը ազգու յորդորական և ի-  
 մաստալից բանախօսութիւն բնարան աննելով  
 Յիսուսի կենսատու խօսքը լծէ օ՛նս եկի զի ըզ-  
 կեանս ունիցին, և առաւել ևս ունիցին,՝ համա-  
 զրական ապացոյցներով բացատրելով մարդկային  
 ֆիզիքական և բարոյական կեանքերն՝ որ արդա-  
 րև մեծ ազգեցութիւն և տպաւորութիւն ունեցաւ  
 ամենեցուն վերայ, և ի վերջ ամենից Ա.Ե.Տ. Հայ-  
 րապետն մեր մեծ գոհունակութիւն յայտնելով  
 Պ. Թաշճեանին և ի նշան շնորհակալեաց վար-  
 ձատրեց նորա արժանաւոր աշխատութիւնը ար-  
 ժանաւոր ընծայել այն է մի պատուական օսկեայ  
 ժամացուցիւ :

Այժմ՝ կմնայ մեզ ամենիցս նրախտադիտական  
 հոգւոյ զգացմամբ և համոզմամբ յայտնելով որ-

գիական խորին շնորհակալեաց հաւաստիքը առ  
 երախտաշատ Հայրն մեր առ Մեծ Քահանայա-  
 պետն Ազգիս՝ առել ջերմեանդ սրտիւ, Փառք  
 մեծի և անզոյր երախտեացդ, գոհութիւն հեռա-  
 տես նախահոգացութեանն, և պարծանք յա-  
 լերժական անմահ յիշատակացն, քանի կկեղեցիք  
 Հայաստանեայց կան ի շինութեան և ի պայծա-  
 ոտութեան՝ լծող փառաւորի Ա.Ե.Տ. անուն նորա  
 ի գոհութիւնս ընտրելոց և ի սիրտ ազգայնոց.  
 յիշեցի յալերժարար պարծանաց դործ Պ. Թաշ-  
 ճեանի. լծող յԱշտիշատ ցնձան օսկեք Մեծին  
 Իսահակայ և ի կրկին խնդ առցն օսկեք սրբոյն  
 Մերովբայ յԱւան Օշախն. - զի հաջ գտաւ Այր  
 մի ընտրեալ ի հազարաց ըստ սրտի և հոգւոյ նո-  
 ցին, զիտաց փառազարգիլ քիրտ և վաստակ նո-  
 ցին հոգևոր, զիտաց երախտագէտ հանդիսանալ  
 Մեծին Մերովբայ, նորոգ դամբարանին կառուց-  
 մամբ, արբարև Այր մի ընտրեալ և Հայկական  
 պարծանաց արժանաւոր Գահոյն արժանաժա-  
 ոանդ Գահակալ :

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻԹԱՐԵԱՆՆՆՆ.

Ի 17 Գոհմբ 1874 թ  
 Ի Գոհմբ Եկեղեցին.

ՅՈՒՅԱԿ ՆՈՒՒՐԱՏՈՒԱՅ  
 Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՆՅ ՄԱՅՐ ԱԹՈՈՒՈՅՍ  
 (ՇՐՈՒՆԻՆԻՆ) :

Ի ՎԵՃԱԿԻՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԱՊՈԼՈՅ.

Խփլաղեցի Մինաս Սահակեան . . . . .	1
„ Մինաս քահանայ Յարութիւնեան . . . . .	50
„ Մարտիրոս քհնյ Մանուկեան . . . . .	50
„ Ազարիկ Հերայետեան . . . . .	50
„ Գաբօ Վիրակոսեան . . . . .	40
„ Յարութիւն Յովհաննիսեան . . . . .	20
„ Մանուկ Չաղիանց . . . . .	30
„ Պետրոս մահտեսի Գասպարեան . . . . .	50
Հասարակութիւն Խաչաբլիխայ գեղջ . . . . .	5
Նոյն զիւղացի Յակովբ Պետրոսեան . . . . .	1
„ Թորոս Յարութեան . . . . .	50